ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2021թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանս, ելնելով «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հարուցված ընթացակարգի քննությունը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հարուցված ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացուցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել մինչև 29.04.2021թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**